# Աննա Բաբուշյան

## Մարդու կյանքը աստեղացոլք

Տիեզերքը՝ հոգի դարձած, դեգերում է անհասցե

Արնածոր է սիրտն երկնքի, այն գրկել է բյու՛ր աստղեր

Մոլորակներն անտարբե՛ր, իրենց ծիրում լու՛ռ բազմած

Անհաղորդ են երկրի վշտին, որտեղ լույսեր կան խամրած:

Հարապտույտն երկրագնդի ասես հունից դուրս եկած

Մոլեգնել է չար հողմերից և սուլում է կատաղած .

Բնությունը մարդուն տվեց, ծառ ու ծաղիկ, լույս, արև

Մարդը ծառից նետ պատրաստեց, երկրի սիրտը նա խոցեց:

Անվերջության այս ճահիճից միայն լույսը փրկվեց

Ու տերը մեզ դարձի գալու ևս մի ճամփա հարթեց,

Բարությունը լույսի քողով մեր սրտերում բույն դրեց

Բարությունից քարը ճաքեց, ու ծաղիկը հույս ծնեց:

Լույսի կաթիլն՝ հույսի կանթեղ, թո'ղ առկայծի հուսավառ

Մենք էլ դառնանք անշեջ կերոն հոգիներում ծաղկավառ,

Չարին մերժած՝ բարուն փարվենք, անմահության ճամփեքով՝

Արահետը մեր պատվաստենք միայն բարի գործերով:

28.08.2024

ԱԽՈՒՐՅԱՆ